

Հավելված  
ՀՀ կառավարության 2023 թվականի  
մարտի 30-ի N 447 - Ն որոշման

«Հավելված  
ՀՀ կառավարության 2017 թվականի  
նոյեմբերի 9-ի N 1440 - Ն որոշման

#### Կ Ա Ր Գ

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային հսկողության միջոցների ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները:

2. Էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորումն իրականացվում է դատական ակտով՝ պետական բյուջեի կամ պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին: Էլեկտրոնային հսկողության ծառայությունները պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին ֆինանսավորվելու դեպքում ֆինանսավորման ծախսերը պետք է համարժեք լինեն պրոբացիայի շահառուի ֆինանսական դրությանը:

3. Միջնորդություն ներկայացնողը դատարան է ներկայացնում առաջարկ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումը պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին կիրառելու վերաբերյալ:

4. Պրոբացիայի շահառուի մոտ բավարար դրամական միջոցների բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ էլեկտրոնային հսկողության կիրառումը մերժելու համար:

5. Էլեկտրոնային հսկողության ծառայություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հատկացված պետական միջոցների հաշվին:

6. Էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորման գումարի չափը հաշվարկում է պրոբացիայի ծառայությունը՝ սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերում նշված բանաձևերի համաձայն, որը վեցամսյա պարբերականությամբ հրապարակվում է պրոբացիայի ծառայության պաշտոնական կայքէջում:

7. Էլեկտրոնային հսկողության ռադիոալիքային սարքավորումների կիրառման դեպքում՝ պրոբացիայի մեկ շահառուի հաշվով օրական ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$O\text{Ծ} = 2\text{Գ} + \text{Պ}\text{Ծ} + 2\text{Ծ},$$

որտեղ՝

$O\text{Ծ}$ -ն օրական ծախսն է,

$2\text{Գ}$ -ն էլեկտրոնային հսկողության ռադիոալիքային սարքավորումների ձեռքբերման օրական գինն է,

$\text{Պ}\text{Ծ}$ -ն սարքի շահագործման համար անհրաժեշտ պահպանման օրական ծախսն է,

$2\text{Ծ}$ -ն չկանխատեսված այլ ծախսերն են, որոնք հնարավոր չէ նախօրոք կանխատեսել (օրինակ, սարքերի պահեստամասերի ձեռքբերում, սպասարկման ծառայությունների շուկայական գների փոփոխություն)։

1) էլեկտրոնային հսկողության ռադիոալիքային սարքավորումների ձեռքբերման օրական գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ա. } O\text{Գ}_1 = 2\text{Գ} / O\text{Գ}\text{Ժ},$$

որտեղ՝

$O\text{Գ}_1$  -ն անձնական նույնականացման սարքի ձեռքբերման օրական գինն է,

$2\text{Գ}$ -ն անձնական նույնականացման սարքի ձեռքբերման գինն է,

$O\text{Գ}\text{Ժ}$ -ն սարքի օգտակար օգտագործման ժամկետն է.

$$\text{բ. } O\text{Գ}_2 = 2\text{Գ}_վ / O\text{գգ},$$

որտեղ՝

$O\text{Գ}_2$  -ը ֆիքսված վերահսկման սարքակազմի ձեռքբերման օրական գինն է,

$2\text{Գ}_վ$ -ն ֆիքսված վերահսկման սարքակազմի ձեռքբերման գինն է,

$O\text{Գ}\text{Գ}$ -ն սարքի օգտակար օգտագործման ժամկետն է.

$$\text{գ. } O\text{Գ}_3 = 2\text{Գ}_ւ / O\text{Գ}\text{Ժ}_1,$$

որտեղ՝

$O\text{Գ}_3$ -ը հաղորդող անլար սարքի ձեռքբերման օրական գինն է,

$2\text{Գ}_ւ$ -ն հաղորդող անլար սարքի ձեռքբերման գինն է,

$O\text{Գ}\text{Ժ}_1$ -ը սարքի օգտակար օգտագործման ժամկետն է.

դ.  $O_{\Phi_4} = \Delta_{\Phi_U} / O_{\Phi_2} / \text{ՇԹ}$ ,

որտեղ՝

$O_{\Phi_4}$ -ը սերվերի շահագործման օրական գինն է,

$\Delta_{\Phi_U}$ -ն սերվերի ձեռքբերման գինն է,

$O_{\Phi_2}$ -ը սարքի օգտակար օգտագործման ժամկետն է,

ՇԹ-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

ե.  $O_{\Phi_{\sigma}} = \Delta_{\Phi_{\sigma}} / O_{\Phi_3} / \text{ՇԹ}_{\sigma}$ , որտեղ՝  $O_{\Phi_{\sigma}}$ -ն ծրագրի (soft ware) շահագործման օրական գինն է,

$\Delta_{\Phi_{\sigma}}$ -ն ծրագրի ձեռքբերման գինն է,

$O_{\Phi_3}$ -ը սարքի օգտակար օգտագործման ժամկետն է,

ՇԹ-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

զ.  $O_{\Phi_U} = O_{\Phi_U} + O_{\Phi_U}$ ,

որտեղ՝

$O_{\Phi_U}$ -ն մոնիթորինգի իրականացման օրական գինն է,

$O_{\Phi_U}$ -ն մոնիթորինգի կենտրոնի կահավորման համար անհրաժեշտ տեխնիկայի փոխհատուցման օրական արժեքն է,

$O_{\Phi_U}$ -ն մոնիթորինգ իրականացնող աշխատողների աշխատավարձի օրական հատուցումն է

2) սարքի շահագործման համար անհրաժեշտ պահպանման օրական ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ա.  $O_{\Phi_U} = U_{\Phi} / O_{\Phi} / \text{ՇԹ}_1$ ,

որտեղ՝

$O_{\Phi_U}$ -ն սերվերի սպասարկման օրական գինն է,

$U_{\Phi}$ -ն սերվերի սպասարկման ամսական գինն է,

$O_{\Phi}$ -ն ամսվա օրերի թիվն է,

ՇԹ-ը սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

բ.  $O_{\Phi_{\nu}} = U_{\Phi_{\nu}} / O_{\Phi_{\nu}} / \text{ՇԹ}_2$ ,

որտեղ՝

$O_{\Phi_{\nu}}$ -ն սերվերի՝ համացանցին կցվելու օրական գինն է (կապուղիների օրական գինը),

ԱՄ<sub>Հ</sub>-ն սերվերի՝ համացանցին կցվելու ամսական գինն է,

ՕԹ<sub>Ա</sub>-ն ամսվա օրերի թիվն է,

ՇԹ<sub>2</sub>-ը սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

գ.  $O\Phi_{\text{ՄԻ}} = A\Phi_{\text{ՄԻ}} / O\Theta^1 / \text{ՇԹ}^2$ , որտեղ՝  $O\Phi_{\text{ՄԻ}}$ -ն մոնիթորինգի կենտրոնի՝ համացանցին կցվելու օրական գինն է,

$A\Phi_{\text{ՄԻ}}$ -ն մոնիթորինգի կենտրոնի՝ համացանցին կցվելու ամսական գինն է,

$O\Theta^1$ -ն ամսվա օրերի թիվն է,

ՇԹ<sup>2</sup>-ը սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

դ.  $O\Phi_{\text{ՏԻՄ}} = A\Phi_{\text{ՏԻՄ}} / A O\Theta / \text{ՍՇԹ}$ ,

որտեղ՝

$O\Phi_{\text{ՏԻՄ}}$ -ն համակարգիչների և ծրագրի տեխնիկական սպասարկման օրական գինն է,

$A\Phi_{\text{ՏԻՄ}}$ -ն համակարգիչների և ծրագրի տեխնիկական սպասարկման ամսական գինն է,

$A O\Theta$ -ն ամսվա օրերի թիվն է,  $\text{ՍՇԹ}$ -ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

3) չկանխատեսված այլ ծախսերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{Q}\mathcal{D}_{\text{Ա}} = (O\Phi_{\text{Ռ}} + O\mathcal{D}_{\text{Պ}}) * 10 \%,$$

որտեղ՝

$\mathcal{Q}\mathcal{D}_{\text{Ա}}$ -ն չկանխատեսված այլ ծախսերն են,

$O\Phi_{\text{Ռ}}$ -ն էլեկտրոնային հսկողության ռադիոալիքային սարքավորումների ձեռքբերման օրական գինն է,

$O\mathcal{D}_{\text{Պ}}$ -ն սարքի շահագործման համար անհրաժեշտ պահպանման օրական ծախսն է:

8. Էլեկտրոնային հսկողության գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումների կիրառման դեպքում՝ պրոբացիայի մեկ շահառուի հաշվով օրական ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$O\mathcal{D}_{\text{GPS}} = O\Phi_{\text{GPS}} + O\mathcal{D}_{\text{Պ GPS}} + \mathcal{Q}\mathcal{D}_{\text{GPS}},$$

որտեղ՝

$O_{GPS}$ -ն էլեկտրոնային հսկողության գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումների կիրառման օրական ծախսն է,

$O_{GPS}$ -ն էլեկտրոնային հսկողության գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումների ձեռքբերման օրական գինն է,

$O_{\text{GPS}}$ -ն սարքի շահագործման համար անհրաժեշտ պահպանման օրական ծախսն է,

$Q_{GPS}$ -ը չկանխատեսված այլ ծախսերն են.

1) էլեկտրոնային հսկողության գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումների ձեռքբերման օրական գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$a. O_{\text{U.S.}} = Q_{\text{U.S.}} / O_{\text{U.S.}},$$

որտեղ՝

$O_{\text{U.S.}}$ -ն անձնական նույնականացման սարքի ձեռքբերման օրական գինն է,

$Q_{\text{U.S.}}$ -ն անձնական նույնականացման սարքի ձեռքբերման գինն է,

$O_{\text{U.S.}}$ -ն սարքի օգտակար օգտագործման ժամկետն է.

$$b. O_{\text{GPS}} = Q_{\text{GPS}} / O_{\text{GPS}},$$

որտեղ՝

$O_{\text{GPS}}$ -ը GPS արբանյակային օպերատիվ-հետախուզական սարքի ձեռքբերման օրական գինն է,

$Q_{\text{GPS}}$ -ը GPS արբանյակային օպերատիվ-հետախուզական սարքի ձեռքբերման գինն է,

$O_{\text{GPS}}$ -ը սարքի օգտակար օգտագործման ժամկետն է.

$$c. U_{\text{O.S.}} = Q_{\text{U.}} / O_{\text{U.}} / C_{\text{U.}},$$

որտեղ՝

$U_{\text{O.S.}}$ -ն սերվերի շահագործման օրական գինն է,

$Q_{\text{U.}}$ -ն սերվերի ձեռքբերման գինն է,

$O_{\text{U.}}$ -ն սարքի օգտակար օգտագործման ժամկետն է,

$C_{\text{U.}}$ -ը սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

$$d. O_{\text{software}} = D_{\text{S.}} / O_{\text{S.}} / U_{\text{S.}},$$

որտեղ՝

ՕԳ<sub>software</sub>-ն ծրագրի (software) շահագործման օրական գինն է,

ԾԳ-ն ծրագրի ձեռքբերման գինն է,

ԾՕԳԺ-ն ծրագրի օգտակար օգտագործման ժամկետն է,

ՄՇԹ<sub>1</sub>-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է,

ե. ՕԳ<sub>Մ</sub>=ՕԺ+ՕՀ,

որտեղ՝

ՕԳ<sub>Մ</sub>-ն մոնիթորինգի իրականացման օրական գինն է,

ՕԺ-ն մոնիթորինգի կենտրոնի կահավորման համար անհրաժեշտ տեխնիկայի դիմաց փոխհատուցման օրական արժեքն է,

ՕՀ-ն մոնիթորինգ իրականացնող աշխատողների աշխատավարձի օրական հատուցումն է.

2) սարքի շահագործման համար անհրաժեշտ պահպանման օրական ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ա. ՕԳ=ՍԱԳ/ԱՕԹ/ՄՇԹ,

որտեղ՝

ՕԳ-ն սերվերի սպասարկման օրական գինն է,

ՍԱԳ-ն սերվերի սպասարկման ամսական գինն է,

ԱՕԹ-ն ամսվա օրերի թիվն է,

ՄՇԹ-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

բ. ՕԳ<sub>Կ</sub>=ԱԳ<sub>Կ</sub>/ԱՕԹ/ԿՄՇԹ,

որտեղ՝

ՕԳ<sub>Կ</sub>-ն սերվերի՝ համացանցին կցվելու օրական գինն է (կապուղիների օրական գինը),

ԱԳ<sub>Կ</sub>-ն սերվերի՝ համացանցին կցվելու ամսական գինն է,

ԱՕԹ-ն ամսվա օրերի թիվն է,

ԿՄՇԹ-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

գ. ՕԳ<sub>ՄԿ</sub> = ԱԳ<sub>ՄԿ</sub> / ՕԹ / ՄՇԹ<sub>ՄԿ</sub>,

որտեղ՝

ՕԳ<sub>ՄԿ</sub>-ն մոնիթորինգի կենտրոնը համացանցին կցելու օրական գինն է,

ԱԳ<sub>ՄԿ</sub>-ն մոնիթորինգի կենտրոնը համացանցին կցելու ամսական գինն է,

ՕԹ-ն ամսվա օրերի թիվն է,

ՄՇԹ-ը-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

դ. ՕԳ ԾՄ =ԱԳՏԽ /ԱՕԹ/ՄՇԹ,

որտեղ՝

ՕԳ ԾՄ-ն համակարգիչների և ծրագրի տեխնիկական սպասարկման օրական գինն է,

ԱԳՏԽ-ն համակարգիչների և ծրագրի տեխնիկական սպասարկման ամսական գինն է,

ԱՕԹ-ն ամսվա օրերի թիվն է,

ՄՇԹ-ն սպասարկվող պրոբացիայի շահառուների թիվն է.

ե. GPS-ն արբանյակային օպերատիվ-հետախուզական սարքի քարտի սպասարկման օրական վճարն է.

3) չկանխատեսված այլ ծախսերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$ՉԾ = (ՕԳ_{GPS} + ՕԾ) * 10 \%,$$

որտեղ՝

ՉԾ-ն չկանխատեսված այլ ծախսերն են,

ՕԳ<sub>GPS</sub>-ն էլեկտրոնային հսկողության գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումների ձեռքբերման օրական գինն է,

ՕԾ-ն սարքի շահագործման համար անհրաժեշտ պահպանման օրական ծախսն է:

9. Էլեկտրոնային հսկողության միջոցները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ